ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

2022թ. բյուջեն ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքի եկամուտների ձևավորման և ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագիրն է, 2022թ. ՏԱՊ-ի, 2021թ. Դիլիջան համայնքի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վրա:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների, համայնքի հիմնական գործառույթներից զատ լրացուցիչ միջոցների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական, նպատակային օգտագործումից:

Գալիք բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները,
- Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների և բնակիչների հետ աշխատանքի արդյունավետությունը,
- Իրականացնել համայնքի ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման գործունեության արդյունավետ կազմակերպում:
- Բարձրացնել բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող համայնքային ծառայությունների և այլ լրացուցիչ ծառայությունների /ըստ համայնքի բնակավայրերի յուրահատկությունների/ մակարդակն ու որակը:
- Բյուջետային հատկացումների, նպատակների, միջոցառումների և ցուցանիշների մեջ հաշվի առնել գեն դերային տեսանկյունը:
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ՝ ըստ համայնքի բնակավայրերի յուրահատկությունների:
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում ըստ բնակավայրերի յուրահատկությունների (մասնավորապես միջհամայնքային ենթակայության ճանապարհների՝ առաջարկելով կատարել իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ):
- Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը, կառուցելով նոր ենթակառուցվածքներ՝ հաշվի առնելով նաև համայնքի համառոտ նկարագիրը և զարգացման ուղղվածությունն ու տեսլականը:
- Հավասար պայմաններ և հավասար հնարավորություններ ստեղծել կանանց և տղամարդկանց անհատական ներուժի ինքնադրսևորման համար,
- Խոցելի խմբերին և բազմազավակ ընտանիքներին ցուցաբերել աջակցություն,
- Զարգացնել զբոսաշրջությունը և զբոսաշրջիկների ներհոսքը,
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:

Համայնքի 2022թ. զարգացման հիմնական ուղղություններն ուղղված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Ես դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանու անդամներին, համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2022 թվականի բյուջեի միջոցների գոյացմանը, դրանց նպատակային օգտագործմանը, բյուջեի կատարմանը և վերահսկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**